ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

ՀԻՆ ԳՈՐԻՍԸ, ՏԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԵՂԾ ԹԷԶԸ ԵՒ ՆՈՐԱՅԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մուտք

Հին Գորիս (բարբառային՝ Կյöրէս) կամ ինչպէս տեղացիներն են ներկայումս անւանում Գորիս գիւղը գտնւում է Գորիս քաղաքից դէպի արեւմուտք՝ Վարարակ գետի ձախ ափին: Գորիս տեղանունը առաջին անգամ յիշատակւում է ուրարտական արքայ Ռուսա I (մ.թ.ա. 735-713 թթ.) արձանագրութեան մէջ՝ իններորդ տողում՝ «...Գուրիաչեան երկիրը...»: Ռուսա I-ը մ.թ.ա. 715 թ.-ին է ձեռնարկել արշաւանք դէպի Գեղարքունեաց ծովի արեւելեան հատուած եւ նուաճել 23 երկրներ, որոնցից մէկը եղել է Գորիսը՝ Գուրիայան: Կյöրէս-Գորիս տեղանուան[1] մէջ պահպանուած է հնդեւրոպական բնիկ ձեւը՝ *g'heu- *g´hoṷoro-*՝ ձոր>գոր || կյöր* /*g´ɦou-ro/[2]*: Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ Սիւնիքի տեղանունների մեծ մասը նախապէս ունեցել է ոչ թէ յատկանուան արժէք, այլ հասարակ անուան նշանակութիւն եւ մատնանշել է աշխարհագրական տարածք կամ տարածքը բնորոշող յատկանիշ: Դրանից յետոյ միայն այդ անունները ճանաչողական լայն նշանակութիւն են ստացել, վերածուել յատուկ անունների, համեմատել՝ šur-(-(i)n)-ul(-i)> Շոռնոխ «ջրերի աշխարհ, հեղեղուտ, խոնաւ վայր»*[3]*: Հնարաւոր է, որ ուրարտական շրջանում կամ դրանից յետոյ միայն հնդեւրոպական ծագմամբ* *g´hoṷoro- *ձոր բառը ստացած լինի տեղանուան նշանակութիւն՝* ***Գուր-իա*** (KURGur-ia)*: Աշխարհագրօրէն Գորիսը գտնւում է մեծ ձորում՝ ընդգրկելով Ջագեձոր-Ջանգեզուրի ձորազանգուածի փոքր ձորերից մէկում, ինչպէս Ծակեծոր, Ջագեձոր, Հալիձոր եւ այլն:* *G´hoṷoro- *արմատից են ծագում ոչ միայն Գորիսը, այլեւ Կորուն (բնակավայր Գորիսի շրջանում), Կուրիսը (բնակավայր Մեղրիի շրջանում): Կարծում ենք, որ յուն.* **χῶρος** *«1. տեղ, տեղանք, 2. արանք, միջեւ եղած տարածութիւն, 3. շրջան, երկիր, 4. գիւղ, 5 հողատարածք»*[4]*, սանս.* दरी (**darI**) *«ձոր, հովիտ», պրսկ.* دره (**darre**) *«ձոր, կիրճ, հովիտ», հայ. ձոր բառերը ունեն նոյնական ծագում՝ հնդեւրոպերէնում՝* ***g'hoṷ(o)ro-***: Յետագայում Ստեփանոս Օրբելեանը Հաբանդ գաւառի հին ցուցակում գիւղը յիշատակում է Գորայք անունով*[5]*, որտեղից պարզ է դառնում, որ Գորիս տեղանուան* ***գոր*** *արմատը նշանակում է «ձոր», իսկ վերջադիր* ***իս***-*ը առաջացել է հայերէնի* ***-այք*** *վերջաւորութիւնից՝-այք=այ>է, ք>ս, է>ի=իս՝ Գոր-իս՝ «ձորեր»՝ Գորայք > Կորէս*

---

[1] Գորիս տեղանուան ստուգաբանութիւնը ամբողջական կարելի է տեսնել՝ **Մ. Քումունց**, «Գորիս» տեղանուան ստուգաբանութիւն, Գիտական յօդուածների ժողովածոյ (Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ), «Ասողիկ» հրատ., Երեւան, 2016, էջ 378-396:

[2] **J. Pokorny,** Indogermanisches etymologisches Wörterbuch, I, II bend (II Auflage), München: Francke Verlag, Bern, 1959, Band, II, f. 45-47.

[3] Այս մասին տե՛ս՝ **Մ. Քումունց**, Պատմական Սիւնիքի Բաղք գաւառի Շոռնոխ բնակավայրը (ստուգաբանութեան փորձ), «Էջմիածին», թիւ Ժ., 2021, էջ 50-66:

[4] **И. Х. Дворецкий,** Древнегреческо-русский словарь (том I, II), Государственное издательство иностранных и национальных словарей, Москва, 1958, том II, с. 1794.

[5] Դիւան հայ վիմագրութեան, պրակ II, Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1960, էջ78:

> Գորիս || Կörէս։

Հին Գորիս բնակավայրի տեղադրութեան շուրջ

Ղ. Ալիշանի «Սիսականի»[6] մի հատուածը մեծ շփոթութիւն է առաջացրել շատ հեղինակների շրջանում՝ սկսած Ե. Լալայեանից, մինչեւ մեր օրերը։ Սխալ թարգմանութիւնը կամ ընթերցելը առաջ է բերել մի թիւր կարծիք, ըստ որի՝ հին Գորիսը գտնուել է Վերիշէն գիւղի տեղում։ Ահա հատուածը գրաբարով[7]։



Լուաք զաւանդութիւն պատմչին Սիւնեաց վասն Զագայ նահապետի ի զարմէ Սիսակայ՝ նախ աստ բնակելոյ, և շինողի Հաբանդայ բերդին, որ յետոյ յիւր անուն՝ յորմէ և սահմանքն՝ կոչեցաւ Զագեձորոյ բերդ, և ընդ նշանաւոր բերդորէից Սիւնեաց դասի ի կարգին, թէպէտ ոչ յիշի յետոյ ի պատմութեան, և հաւանելի է լինել ի սահմանս հնոյն Կորէսի, որ կայ առ եզերբ ջրոյն յաջմէն իբր երիւք մղոնաց ի Մ. Հա. նորոյ աւանին, ի 4780՝ բարձու. զի և վասն հնաչէն դաստակերտին ասէ պատմիչն, «Շինեալ ի վերայ գետոյ միոյ, կոչէ յիւր անուն զձորն» Զագեձոր, և զբերդն՝ Զագեձորոյ բերդ»։ Ի գեղեցիկ

«Լսեցինք Սիւնեաց պատմիչի աւանդութիւնը Զագ նահապետի մասին՝ Սիսակի զարմից, նախ այստեղ բնակուելու եւ Հաբանդ բերդի շինողի [մասին], որ յետոյ իր անունով (որից եւ սահմանները) կոչուեց Զագեձորի բերդ եւ դասւում է Սիւնեաց նշանաւոր բերդերի կարգում, թէպէտ յետոյ չի յիշւում պատմութեան մէջ. եւ պէտք է համաձայնուել, որ եղել է հին Կորէսի սահմաններում, որ աջից ջրի եզրին է, նոր աւանի հիւսիս-արեւմուտքում՝ մօտ երեք մղոնով, 4780՝ բարձրութեամբ։ Եւ պատմիչը հնաշէն դաստակերտի մասին ասում է. «Շինելով մի գետի վրայ՝ իր անունով ձորը կոչում է Զագեձոր, եւ բերդը՝ Զագեձորի բերդ»»[8]։

1. Այստեղ բառացի է թարգմանուած «եւ պէտք է համաձայնուել» *հատուածը, որ պէտք է լինէր* «հաւանաբար «կամ» հաւանաբար եղել է»՝ «եւ հաւանելի է»։

2. «...որ յետոյ իր անունով (որից եւ սահմանները) կոչուեց Զագեձորի բերդ» *նախադասութեան բնոյթով որոշիչ լրացումներն են՝* «որ եղել է հին Կորէսի սահմաններում», «որ աջից ջրի եզրին է», *[որ]* «նոր աւանի հիւսիս-արեւմուտքում՝ մօտ երեք մղոնով, 4780՝ բարձրութեամբ» *[է գտնւում]*, այսինքն՝ սրանք «Զագեձորի բերդ» *անդամի որոշիչ լրացումներն են։ Պայմանականօրէն փոխակերպելով՝ այսպէս կը ստացուի՝* «...հին Կորէսի սահմաններում եղած եւ աջից ջրի եզրին գտնուող Զագեձորի բերդ*[ը]*՝ նոր աւանի հիւսիս-արեւմուտքում՝ մօտ երեք մղոնով, 4780՝ բարձրութեամբ *[գտնուող]*»։

3. Ահա թարգմանութեան գծապատկերը՝

---

[6] **Ղ. Ալիշան**, Սիսական։ Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Ս. Ղազար, Վենետիկ, 1893, էջ 261։

[7] Այս մասին կարելի է տեսնել՝ www.sarc.am.

[8] Հատուածի թարգմանութիւնը՝ ըստ Է. Մկրտչեանի («Սիւնիքի հայագիտական հանդէս», Գորիս, թիւ 4-5, 2011, էջ 33-44, 42-50)։



4. Նոյն հեղինակը՝ Ղ. Ալիշանը, որ Զանգեզուրը եւ Զագեձորը նոյնացնում է, աշխատութեան մէջ՝ նոյն տեղում, բերում է այս նկարը՝ Կորէս=Զանկեազոր գրութեամբ։



5. Ղ. Ալիշանի «Սիսականում» միայն այս հատուածն է, որ կռուան է հին Գորիսը Վերիշէնում տեղադրելու կարծիքի համար։ Միւս բոլոր մասերում՝ առանց բացառութեան, հին Գորիսը Կörէս=Գորիս գիւղ վայրում է։ Խորհրդային շրջանում՝ 20-րդ դարի առաջին քառորդում, հետեւելով Ե. Լալայեանի սխալ կարծիքին (աւելորդ ենք համարում յղումը Ե. Լալայեանից), Վերիշէնը համարել են Հին Գորիս, նոյնիսկ անձնագրերում, վարչական որոշ փաստաթղթերում եւ երթուղային աւտոպուսի վրայ գրուած էր Հին Գորիս։ Սխալը արագօրէն կանխուել է, գիւղը վաստակել է ժողովրդական իր անուանումը՝ վերին շէն՝ Վերիշէն։

6. Զագեձորի բերդը, ըստ Ղ. Ալիշանի, գտնւում է հիւսիս-արեւմուտքում, այլ ոչ

թէ արեւելքում, ինչպէս սխալմամբ տեղադրում են. «...կայ առ եզերբ ջրոյն յաջմէն իբր երիւք մղօնք ի Մ. (արեւմուտք) Հս. (հիւսիս) նորոյ աւանին...»։

7. Հին եւ Նոր Գորիսները իրենց տեղում են շուրջ 5000 տարի եւ առանց ընդհատումների կրում են բնիկ ժողովրդի բարեբեր գոյութիւնը։ Ներկայիս Կյորէսի եւ Գորիսի գտնուելու վայրը հարց դարձնելը, ուսումնասիրութեան ասպարէզ հանելը պատմագիտական կեղծ թէզ է, եւ չենք կարող ասել, թէ ինչ նպատակ է հետապնդում։

Հին Գորիսի նորայայտ վիմական արձանագրութիւնները

Անդրադարձանք Հին Գորիսի տեղադրութեանը վերաբերուող հարցերին, որին կը յաջորդի մեր յօդուածի երկրորդ նպատակը՝ Հին Գորիսի վիմական արձանագրութիւնների վերծանութիւնն ու դրանց կարեւորութիւնը պատմական տուեալ ժամանակաշրջանի համար։ Հին Գորիսի վիմական աշխարհին անդրադարձել է Ս. Բարխուդարեանը, ով Սիւնիքում կատարած իր հետազօտութիւններն ամբողջացրել է «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարի երկրորդ պրակում։ Վիմագրագէտը բնակավայրի տարածքից վերծանել եւ հրատարակել է ութ արձանագրութիւն, որոնցից մէկը մէջբերել է Եր. Լալայեանի կատարած ուսումնասիրութիւնից[9]։ Մեր նպատակն է գրառել մատենաշարից ինչ-ինչ պատճառներով դուրս մնացած վիմագրերը։

Հին Գորիսը՝ ներկայիս Գորիս գիւղը, մելիքանիստ էր։ Դա ենթադրում է, որ Գորիսը երկրամասի կեդրոն էր, որտեղ վարչաիրաւական հարցեր էին լուծւում։ Միջնադարեան Հայաստանի պարսկահպատակ վայրերում մելիքները համարւում էին կալուածատէր-հողատէրեր (ملک || maleq), իսկ այն բնակավայրերը, որտեղ նստում եւ կառավարում էին մելիքները, փաստօրէն, շրջկենտրոնի կարգավիճակ ունէին։ Առայժմ մեզ յայտնի է, որ Գորիսի առաջին Մելիքը Պաղրի որդի Օհանն էր, ով Փանահ խանից իր տիտղոսը ստացել էր Ղարաբաղի Մելիք-Շահնազարի միջնորդութեամբ եւ Գորիս, Խոտ, Շնհեր, Հալիձոր, Քարահունջ, Ալիղուլիքենդ, Մաղանջուղ, Կորու գիւղերում մելիք հաստատուելով՝ եկել էր կառավարելու։ Նա նախ բնակութիւն է հաստատել Ծակերի ձորում, ապա 1870 թուականին Վարարակ գետի աջ ափին հիմնել է Նոր Գորիսը եւ տեղափոխուել այնտեղ[10], իսկ Հին Գորիսը մնաց որպէս թաղամաս՝ մտնելով քաղաքի շրջագծի մէջ։ Յետագայում, այլ գրաւոր աղբիւրներում կարդում ենք, որ Գորիսում մելիքական տոհմը ծագել է աւելի վաղուց[11]։ Այսպէս, հին Գորիսից հիւսիս, ձորի մէջ, մի կիսաւեր մատուռի ճակատակալ քարին արձանագրուած է. ԹԻԻ ՌԺԴ ...ԵՍ ՄԵԼԻՔ ԷԳԱՆ ԿԱՌՈՒՑԻ...[12]։ «Դիւանում» տեղ գտած մէկ այլ արձանագրութեան համաձայն. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՌՆ ՄԵԾԻ ՄԵԼԻՔ ՈՀԱՆ Մ[Ա]ԼԽԱՍԻՆ ՈՒ ՄԻՐԻՆ, ՈՐ ԵՂԵՒ ԹՎԱԿԱՆԻ ԱՄԻՆ ։ՌԻԱ։- ԻՆ (1572 թ.)[13]։ Կարելի է ենթադրել, որ Գորիսի առաջին մելիքը նոյնպէս կրել է Օհան անունը։ Մեծ Օհանին կոչել են նաեւ Բաբուռ[14] Օհան։[15]

Փաստօրէն՝ հիմնուելով վիմական արձանագրութիւնների վրայ, ենթադրւում է, որ մելիքական տոհմը Գորիսում սկիզբ է առնում XVI դարից[16]։ Ե. Լալայեանի յիշատակած Մելիք Օհանի որդիները կրում են Յոսէփ եւ Սէին [Հուսէին] անունները, յետա-

[9] ԴՀՎ, պրակ II, էջ 80, արձ. 232:
[10] Ե. Լալայեան, Ազգագրական հանդէս, II տարի, Դ գիրք, № 2, Թիֆլիս, 1898, էջ 8-11:
[11] Ս. Խանզադեան, Հայրենապատում, հատ. 2, Երեւան, 1981, էջ 181:
[12] Ա. Բակունց, Երկերի ժողովածոյ, հատ. 3, Երեւան, 1982, էջ 480:
[13] ԴՀՎ, Պրակ II, էջ 80, արձ. 235:
[14] Հաւանաբար «Բաբուռ»-ը մականուն է, որը պարսկերէն նշանակում է «վագր»:
[15] Ս. Հախուերդեան, Գորիսի ամփոփ պատմութիւն, Ջանգակ, Երեւան, 2005, էջ 164:
[16] Նոյն տեղում, էջ 121:

գայում այս Հուսէինից էլ սերում է Հուսէինեան նշանաւոր ազգանունամբ տոհմը, որոնց մասին հանգամանօրէն կը տեղեկացուի վիմական անտիպ արձանագրութիւնների միջոցով։ Ըստ տեղեկութիւնների, այս տոհմի ժառանգները Սիբիր աքսորուելուց յետոյ, ներկայումս բնակւում են Մոսկուայում։ Յետագայում նրանց նախաձեռնութեամբ եւ միջոցներով է կառուցուել Գորիսի Սբ. Գր. Լուսաւորիչ եկեղեցին[17]։

Այսպէս, 1765 թուականին Պաղրի որդի Մելիք Օհանը կառուցում է գիւղի ձորամիջեան Սբ. Մարտիրոս եկեղեցին՝ իր եւ հօր յիշատակին, հարաւային մուտքի բարաւորին թողնելով հետեւեալ շինարարական արձանագրութիւնը. ՅԻՇԱՏԱԿ Է ԵԿԵՂԵՑԻՍ ՄԷԼԻՔ / ՈՀԱՆԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՅՆ / ՊԱՂԸՐԻՆ ԹՎԻՆ։ ՌՄԺԴ[18]։ (1765)

Գորիս գիւղի հարաւային հատուածում՝ Գիւնէյ կոչուող թաղամասում, գտնւում է Սբ. Հռիփսիմէ եկեղեցին նկ. (1), որի կառուցման նախաձեռնողը եղել է Մելիք Օհանը[19]։ Եկեղեցու հարաւային մուտքի բարաւորի շինարարական արձանագրութիւնը հետեւեալն է. ՅԻՇԱՏ[Ա]Կ Է ԵԿԵՂԵՑԻՍ / ՊԱՂԸՐԻ ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՕՀԱՆԻՆ / ԹՎ[Ի] Ն ՌՄԻԵ (1776)[20] (նկ.1)



Եկեղեցին ունի երկու մուտք՝ հարաւից եւ արեւմուտքից։ Եկեղեցուն հիւսիսային կողմից կցուած են երկու սենեակ, որոնցից մէկի մուտքը եկեղեցու ներսից է, միւսինը՝ դրսից։ Ներսի սենեակը հաւանաբար ծառայել է իբրեւ աւանդատուն։

Մեր կատարած ուսումնասիրութեան արդիւնքում ի յայտ են եկել մեծ թուով նոր արձանագրութիւններ ինչպէս եկեղեցու տարածքում, այնպէս էլ մատուռի շուրջը տարածուած միջնադարեան գերեզմանոցում, որտեղ պահպանուել են մելիքական տոհմի բազմաթիւ ներկայացուցիչների տապանաքարեր։ Այն ներկայացնում ենք ստորեւ.[21]

Սբ. Հռիփսիմէ եկեղեցու բակի վիմագրերը.

*1. **Տապանաքար**. եկեղեցու բակում, հարթ, կոտրուած, 6 տող.*

---

[17] Նոյն տեղում, էջ 163:

[18] Դիւան II, էջ 80, արձ. 232:

[19] Մելիք Օհանի անուան հետ է կապուած նաեւ Սբ. Հռիփսիմէ եկեղեցուց ոչ հեռու գտնուող մելիքական ապարանքը, որի մասին իր «Գորիսի մելիքական ապարանքի պեղումները» յօդուածի մէջ հանգամանօրէն անդրադարձել է հնագէտ Արման Նալպանտեանը (այս մասին տե՛ս՝ Ա. Նալպանտեան, Գորիսի մելիքական ապարանքի պեղումները, Սիւնիք կրթութեան եւ մշակոյթի օջախ, Երեւան, 2019, էջ 167-185:

[20] **Գ. Ստեփանեան**, Դիտարկումներ Գորիսի մելիքութեան հիմնադրման եւ առաջին մելիքի՝ Մեծ Մելիք Օհանի եւ նրա որդու՝ Բաղրի վիմագրական արձանագրութիւնների շուրջ։ Հայագիտութիւն Սիւնիք, 2019, № 1(13), Երեւան, էջ 41:

[21] Ծանօթ. Մելիք Օհանի եւ Հուսէինեան տոհմի խաչքարերի եւ տապանաքարերի արձանագրութիւններին անդրադարձել է Ս. Բարխուդարեանը: Դիւան II, էջ 80, 81 արձ. 232, 233, 234, 235, 237:



ՈՎ ԴԱՌՆ ՄԱՀ ՈՐ ՀԱՆԴԻՊԵԱՐ ՍՈՐԻՆ / ԽԱՆԻՑ ՄԵԾ ՄԻ ՄՆԱՑ ԻԻՐՆ ՍՐՏԻՆ / ԽԱԶԱԿԻՐ ԸՆԴՐԵԱԼ ԱՎԱՔ ՔԱ [ՀԱ] ՆԱՅԻՆ / ԱՋԳԱՎ ՄԻՆԱՍԱՆՑ [ՏՐ] ՄԻՆԱ[Ս] [Մ]ԻԱԲԱՆԻՆ / ԹԱՂԵՑԱԻ ՁԵՌ [Ա] ՄԲ ԽԱՁ[Ա]ՏՈՒՐ [Յ]ԱՋՈՐԴԻՆ / ՆԱԻԱԿԱՏԵԱՑ ԿԻՐԱԿԻ ՕՐ ՍԲ Խ[Ա]ՁԻՆ (1838)[22]: *(նկ.2)*

2. ***Տապանաքար****. եկեցեցու հարաւային պատի տակ, 2 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԱԲՈՒՌԻ ՈՐԴԻ ՏՐ / ՅԱՐՈՒԹԻՒՆԻՆ Թ[Վ]ԻՆ ՌՄ ԾԸ (1809): *(նկ.3)*

3. ***Տապանաքար****. բեկոր եկեղեցու հարաւային պատի տակ, նախորդի կողքին, 2 տող.*

ՄԻ ՈՐԴԻ Տ[Ր] / Թ[Վ]ԻՆ [...]: *(նկ. 4)*

4. ***Տապանաքար****. բեկոր, 3 տող.*

ՄԱՍ / [Տ]ԻՐ ԸՍՏԷ [ՓԱՆ] / Թ[Վ]ԻՆ ՌՄԿԻ (1811): *(նկ.5)*

Ներկայացնում ենք գիւղի միջնադարեան գերեզմանոցում տեղ գտած տապանաքարերի արձանագրութիւնները.

[22] Տէր Մինասանց տոհմական գերեզմանատունը գտնում է Հին Գորիսի միջին գերեզմանատանը, որոնց տապանագրերին կ՚անդրադառնանք սոյն յօդուածում:

5. ***Տապանաքար.*** *հարթ, 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Ի ՀԱՆԳՍՏԵԱՆ / ԻՋԵԱԼ ՄԱՐՄՆՈՒՆ Ի ԳԵՐԵԶՄԱՆ / ՓՈԽԵՑԱՒ Ի ԿԵԱՆՍ ԱՌ Տ̄Ր ԱՐՔԱՆ / ՄԵԾ ԻՇԽԱՆ ՂԱԶԱՐ ԲԷԿ ՄԷԼԻՔ / ՕՀԱՆԵԱՆ 186 .ԻՆ: *(նկ.6).*

6. ***Տապանաքար.*** *հարթ, 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԿՍՏԵԱՆ / ԱՅՍՄ Մ[ԿՐ] ՏԻՋԻ ՅՕՀԱՆԷՍԵԱՆ / ՓՈԽԵՑԱ Ի ԿԵԱՆՍ ԱՌ Տ̄Ր ԱՐՔԱ / ԷՐ ՀԱՍԱԿԱՎ ԵՐԿԱՆՍԵԱՆ / 1841 ԻՆ: *(նկ.7)*

7. ***Տապանաքար.*** *հարթ, 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՎԱԽՃԱՆՈՂԻՆ / ՄԱՐՄՈՎ ԻՋԵԱԼ Ի ԳԵՐԵԶՄԱՆ / ԸՂ ՍԱ ՍԱՏ [Ա]Ր[Ո]Ղ ՈՐԴԻ Է ԸՍՏԵՓԱՆԻՆ / ԸՂ ԾՆՈՂԸՆ ԱՐԱՐ ԵՒ ՄԱՅՐ Ի ՍՈՐԻՆ / ԷՐ ՀԱՍԱԿԱՒ ՔՍԱՆ ԵՒ ՀԻԿ ԱՄԻՆ: *(նկ. 8)*

8. ***Տապանաքար.*** *հարթ, 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՐՄՆՈ ԴԵՂԻ՝ / ԻՄ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ ԵՒ ՅՈՒՐ ՊԱՏՈՒԵԼԻ / ՄԱՍՆ Է ԴՈՀՄԻ ԱԶՆԻՒ ՈՐԴԻ՝ / ԱՆՈՒՆՆ Է. ՏԻՐԱՑՈՒ ՍԱՐԳԻՍԻ՝ / ՈՐԴԻ Է Տ̄Ր ՄԻՆԱՍ Ք[Ա]Հ[Ա]ՆԱ[Յ]Ի 1848 ԻՆ: *(նկ.9)*

9. ***Տապանաքար.*** *հարթ, 2 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԻՆԱՍԱՆՑ ՊԱՊԱ / ԹՎ [ԻՆ] ՌՄԻԸ (1779): *(նկ.10).*

10. ***Տապանաքար.*** *հարթ, 4 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԻՆԱՍԱՆՑ ՊԱՊՈՒ ՈՐ / ԴԻ ՍԱՐԳԻՍԻՆ ԵՒ ԻՒՐ ԿՈՂԱԿԻՑ Ա / [Զ]ԻԶԻՆ ՈՐ Է ՏՈՒՍԴՐ ՄԵԼԻՔ ՕՀԱՆԻ / 1841 ԻՆ: *(նկ.11)*

11. ***Տապանաքար.*** *հարթ, 3 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԻՆԱՍԱՆՑ ՍԱՐԳԻՍԻ / ՈՐԴԻ ՋՀԱ [Ն]Գ [Ի]ՐԻՆ ԵՒ ԻՒՐ ԳՈՂԱ [Կ]ԻՑ / ՊԱԼԱՍԱՆԻՆ 1866 ԱՄԻՆ: *(նկ.12).*

12. ***Տապանաքար.*** *հարթ, 3 տող, թուականը եղծուած.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԻՆԱՍ / ԱՆՑ ՋՀԱՆԳԻՐԻ ՈՐԴԻ / ՕՍԷՓԻՆ [...][23]: *(նկ.13)*

13. ***Տապանաքար.*** *հարթ, 2 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԻՆԱՍԱՆՑ / ՍԱՐԳԻՍԻ ՈՐԴԻ [...]: *(նկ.14).*

14. ***Տապանաքար.*** *հարթ, 4 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԻՆԱՍԱՆՑ Ս[ԱՐ] / ԳԻ [ՍԻ] ՏՈՒՍՏՐ ԳԱՅԱՆԱՅԻՆ / ՅՈՐԵՂԲՈՐ ՈՐԴԻ ՄԱՆՈՒՋԱՐԻՆ / ԹՎԻՆ ՌՄԻՆ. 1866 ԱՄԻՆ: *(նկ. 15)*

15. ***Տապանաքար.*** *հարթ, 4 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Տ̄Ր ՄԻՆԱ [Ս]Ի / ՀԱՐՍՆ ՄԱՆՈՆ ՈՐ Է / ՔԱՐԱՅՈՒՆՃԷՅԻ ԹՈՒ / ՆՈՒ ԴՈՒՍՏՐՆ ԹՎԻՆ ՌՄ (1751): *(նկ. 16)*

16. ***Տապանաքար.*** *հարթ, 5 տող.*



ԱՍՏ ՀԱՆԳՋԻ ՄԱՐՄԻՆ ԱՄՈՒՍՆՈՅ / ՄԱՆՈՒՋԱՐ ԲԷԿԻ ՄԵԼԻՔ ՀԻՍԷԻՆ / ԵԱՆ ՏԻԿԻՆ ՄԱՐԵՄԱՅ / ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԾՆ. 1840 Թ. / ՎԱԽՃ 1904 Թ.[24]: *(նկ. 17)*

---

[23] Արձանագրութեան թուականը եղծուած է, բայց ելնելով արձանագրութեան բովանդակութիւնից՝ կարելի է ենթադրել, որ Օսէփը նախորդ արձանագրութեան մէջ տեղ գտած Զհանգիրի որդին է:

[24] Արձանագրութեան մէջ ամփոփուած Մանուշար Բէկը Մելիք Հուսէինի թոռն է, Մելիք Թունիի (Յարութիւնի) որդին: Մելիք Թունին Զանգեզուրում առաջին անգամ մտցրեց կարտոֆիլի մշակումը: Տե՛ս Եր. Լալայեան, Երկեր, Դ, Երեւան, 2021, էջ 125:

17. ***Տապանաքար****. հարթ, 2 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՆՈՒՉԱՐ / ՈՒՉԲԱՏՕՎ 1849: *(նկ.18)*

Տէր Մինասանց տոհմական գերեզմանատան շարունակութիւնը գտնւում է գիւղից դէպի հիւսիս՝ մի ձորի մէջ.

18. ***Տապանաքար****. հարթ, 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱ/ ՅՐԱՊԵՏ Ք[Ա]Հ[Ա]Ն[Ա]ԻՆ 1885 / ԵՒ ԿՈՂԱԿԻՑ ՄԱՆՈՒՇԱ / ԿԻՆ ՍԱ Է ՍԿԻՍԲՆ ՀԱ / ՆԳԻՍՏ 1872 ԱՄԻԴ: *(նկ. 19)*

19. ***Տապանաքար****. հարթ, 5 տող.*



ՇԻՐԻՄ ԵՒ ԴԱՄԲԱՐԱՆ / ՆԱՆԱՅԻ ԿՆՈՋ ՍԱՀԱԿԱՅ / ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆՑ, ՄՕՐ ՏԷՐ ՆԵՐՍԻՍԻ ԾՆ [ՈՒԱԾ] / 1847 -1894 ԱՄԻ: *(նկ.20)*

20. ***Տապանաքար****. հարթ, նախորդի կողքին, 4 տող.*



ՇԻՐԻՄ ԵՒ ԴԱՄԲԱՐԱՆ / ՏԻՐՈՒՀԻ ՄԱՐԵՄԱՅ՝ ԿՆՈՋ / ՏԷՐ ՆԵՐՍԻՍԻ ՏԷՐ ՄԻՆԱՍ / ԵԱՆՑ ԾՆ 1875 -1905 ԱՄԻ: *(նկ.21)*

21. ***Տապանաքար****. հարթ, 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ / ՄԻՆԱՍԵԱՆՑ Ճ[Ա]Հ / ԱՆԿԻՐԻ. ՈՐԴԻ ՎԱ/ ՐՊԵՏ ԳՐԻԳՈՐ / ԻՆ: 1896 ԱՄԻ: *(նկ.22)*

22. ***Տապանաքար****. հարթ, վրան 4 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՅՐԱ / ՊԵՏ ԲԷԿԻ ԿՆՈՋ ՎԱՐ / ԴԷՔԻՆ ՄԷԼԻՔ ՕՀԱՆ / ԵԱՆՑ ՀԱՆԳԵԱ Ի ՏԷՐ 1901: *(նկ.23)*

23. ***Տապանաքար****. հարթ, 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՆԱՍ ԲԷԿԻ / ԵՒ ԿՆՈՋՆ ԹԱԳՈՒՀՈՅ / ՄԵԼԻՔ ՕՀԱՆԻԱՆԻ / ՀԱՆԳԵԱՆ Ի ՏԷՐ, 1820 ԱՄԻ / Զ 1901 ԱՄԻ: *(նկ.24)*

24. ***Տապանաքար****. հարթ, վրան 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊԵՏՐՈՍ/ԲԵԿ ԿԻՆ ԹՈՒԹԻՆ / ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐ/ ԵԱՆՑ ԶԱՆԱԽԶԻՑ / Ի 1891 ԻՆ: *(նկ.25)*

Այսպիսով, Հին Գորիսի այս նորայայտ արձանագրությունները կարեւոր սկզբնաղբիւր են հանդիսանում այնպիսի ժանրի լուսաբանման հարցում, ինչպիսին տոհմագրությունն է։ Արձանագրությունների հրատարակումը լոյս է սփռում Հին Գորիսի մելիք Հուսէինեան եւ Տէր Մինասանց տոհմերի պատմութեան վրայ։ Այն կարեւորություն է ներկայացնում Սիւնիքի տեղական, լոկալ պատմութեան ուսումնասիրութեան խնդրում՝ կոնկրէտ ընտանիքների պատմութեան վեր հանման միջոցով։

Լուսանկարներ՝

Նկ.1. Եկեղեցու բարաւորի արձանագրութիւն:

Նկ. 2 Տապանաքար. Աւագ Քահանայ Խաչատուրի:

Նկ. 3. Տապանաքար Տէր Յարութիւնի:

Նկ. 4. Տապանաքարի բեկոր:

Նկ. 5. Տապանաքար Տէր Ստեփանի:

Նկ. 6. Տապանաքար Ղազար Բեկ Մելիք Օհանեանի:

Նկ. 7. Տապանաքար Մկրտիչ Օհանեանի:

Նկ. 8. Տապանաքար Ստեփանի որդու:

Նկ. 9. Տապանաքար Տիրացու Սարգսի որդի Տէր Մինաս Քահանայի:

Նկ. 10. Տապանաքար Մինասանց Պապու:

Նկ. 11. Տապանաքար Սարգիսի եւ իւր կողակից Ազիզի:

Նկ. 12. Տապանաքար Մինասանց Սարգիսի որդի Ջը-հանգիրի եւ իւր կողակից Պալասանի:

Նկ. 13 Տապանաքար Մինասանց Ջհանգիրի որդի Օսէփին:

Նկ. 14. Տապանաքար Մինասանց Սարգիսի որդի...:

Նկ. 15. Տապանաքար Մինասանց Սարգիսի դուստր Գայիանայի հօրեղբօր որդի Մանուշարի:

Նկ. 16. Տապանաքար Տէր Մինասի հարս Մանոյի:

Նկ. 17. Տապանաքար Մարեմա Յովհաննիսեանի:

Նկ. 18. Տապանաքար Մանուշար Ուզբաշովի:

Նկ. 19. Տապանաքար Հայրապետ Քահանայի եւ կողակից Մանուշակի:

Նկ. 20. Տապանաքար Նանայի:

Նկ. 21. Տապանաքար Տէր Ներսէսի կին Մարեմայի:

Նկ. 22. Տապանաքար Ճնանկիրի որդի Գրիգորի:

Նկ. 23. Տապանաքար Հայրապետ Բեկի կին Վարդեմի:

Նկ. 24. Տապանաքար Մանաս բեկի եւ կնոջ Թագուհու:

Նկ. 25. Տապանաքար Պետրոս բեկի կին Թութունի:

ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ

Բան. գիտ. թեկ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Սիւնիքի հայագիտական հետազօտութիւնների կեդրոնի նախագահ

ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ